ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 13/17

22.11.2017թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը **(այսուհետ՝ Կենտրոն)**,

քննարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ (ընդունվել է 01.07.1998թ., ուժի մեջ է մտել 12.01.1999թ., ՀՕ-248)[1] 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի (ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է մտել 01.08.2003թ., ՀՕ-528-Ն)[2] 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Վարտգեզ Գասպարին (ներկայացուցիչներ՝ Տիգրան Եգորյան, Դավիթ Գյուրջյան, այսուհետ՝ Դիմող) 03.07.2017թ. անհատական սահմանադրական դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Մասնավորապես, դիմողը խնդրել է.

- *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 29, 61, 63, 69, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով չի սահմանում դատարանի պարտականությունը դատական ակտը կողմին այն հրապարակելու օրը փրամադրելու պարտականությունը (դատական ակտի հասանելիությունը կողմին չի ապահովվում հրապարակման օրը),*
- *ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «Վերաքննիչ բողոք բերվում են՝ 1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ*

[1] Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.21/22(55):
[2] Տե՛ս ՀՀՊՏ 2003.05.02/25(260):

էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում» դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 29, 61, 63, 69, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր այնքանով, որքանով այն, ընթացակարգային խնդիրներով պայմանավորված, հնարավորություն է նախատեսում նվազեցնել դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը,

- կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածը և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգավորումներին դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 29, 61, 63, 69, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին հակասող այնքանով, որքանով արդյունքում դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հնարավոր է նվազեցնել ընթացակարգային կանոնակարգումներով և խնդիրներով պայմանավորված,

- ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող և անվավեր:

Դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է հետևյալ փաստարկներով:

ա) ներկայացնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ իր փաստարկները, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ դիմողը գտնում է, որ օրենսդրի կողմից այս կամ այն դատական ակտը բողոքարկելու համար սահմանված ժամկետները կոչված են երաշխավորելու արդար դատաքննության, իրավական որոշակիության և դրանց բաղադրիչ հանդիսացող այլ իրավունքներ և սկզբունքներ, ուստի այդ նյութական ժամկետները պետք է ապահովվեն անձանց համար իրավակիրառական պրակտիկայում և չսահմանափակվեն բազմաթիվ սուբյեկտիվ հանգամանքներով, որոնք կանխատեսելի, որոշակի ու կայուն չեն:

Դիմողը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման համար նախատեսված մեկամսյա ժամկետը որևէ այլ գործողության կատարման, առավել ևս՝ պետության կողմից իր պարտականության կատարման նպատակով նվազեցնելը, չի կարող կրել որևէ իրավաչափ նպատակ, նման կարգավորումը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից, անհրաժեշտ չէ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:

Դիմողի կարծիքով՝ նշյալ դրույթներն այնքանով, որքանով չեն ապահովում դատավճռի հանձնումը կողմին, հատկապես՝ ամբաստանյալին, դրա հրապարակման օրը, ինչպես նաև դրանց տրված այնպիսի մեկնաբանությունը, ըստ որի՝ անձի կամքից անկախ բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով վերականգնված է համարվում դատարանի կողմից դատավճիռը կողմին հանձնելու պարտականության կատարման համար նախատեսված ժամկետի հաշվանցմամբ, հակասում են իրավական

որոշակիության, խտրականության արգելման սկզբունքներին, ինչպես նաև Սահմանադրությամբ ամրագրված՝ ամբաստանյալի կողմից իր նկատմամբ կայացված դատավճիռը բողոքարկելու իրավունքի բովանդակությանը,

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը նշում է, որ ՀՀ Սահմանադրությունը, ի տարբերություն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, չի նախատեսում կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման այնպիսի հիմք, ինչպիսին արդարադատության հեղինակությունն ու անաչառությունն է: Նշված համատեքստում, ըստ դիմողի՝ դատարանների, դատավորների, դատավարության մասնակիցների հեղինակության պաշտպանությունը պետք է տեղափոխել կա՛մ քաղաքացիաիրավական, կա՛մ վարչաիրավական դաշտ և դիտարկել մասնավոր անձի պատվի ու բարի համբավի պաշտպանության իրավունքի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է որոշել վիճարկվող նորմերի սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ 17.07.2017թ. թիվ ՍԴԴԿՈ/1-15 որոշմամբ գործն ընդունել է քննության:

Նիստը նշանակված է 2017թ. նոյեմբերի 28-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

…

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

…

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է[1]:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը**՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը**՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:[2]

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին**՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը[3]:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության

---

[1] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:
[2] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:
[3] ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. *Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ,* Երևան, 2010, էջեր 222-223:

հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. **«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների,** հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»[1]:

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. **«Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»**[2]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունը անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

---

[1] Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

[2] Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «**իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:**

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների վարույթ ընդունումը չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»[1]:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

---

[1] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման <u>կարգն ու պայմանները</u>...» (ընդգծումը մերն է՝ Գ.Կ.):

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. **«Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:**

Հարկ է հատկապես անդրադառնալ ՀՀ սահմանադրական դատարանի 16.10.2012թ. թիվ ՍԴՈ-1052 որոշմանը, որի մեջ սահմանադրական դատարանը մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական**

ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:...

... ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի ելքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում՝ ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը:»:

Կամ՝ ՀՀ սահմանադրական դատարանն իր 18.12.2012թ. թիվ ՍԴՈ-1062 որոշմամբ արձանագրել է.

«6. Անդրադառնալով դիմողի բարձրացրած երկրորդ հիմնահարցին՝ կապված վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով նախատեսված մեկամսյա ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելու վերաբերյալ դրույթի հետ, սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված հիմնահարցը քննության առարկա է դարձել իր՝ 16 հոկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ-1052 գործով: Նշված և սույն գործով քննության առարկաների միջև տարբերությունը կայանում է նրանում, որ սույն գործով դիմողի կողմից բարձրացված՝ վերը նշված հարցադրումը վերաբերում է գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկմանը, իսկ ՍԴՈ-1052 որոշումը վերաբերում էր գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կարգին: Այսուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով նույնպես կիրառելի են սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմամբ ամրագրված համապատասխան իրավական դիրքորոշումները:

Հարկ համարելով անդրադառնալ ՍԴՈ-1052 որոշման միայն եզրափակիչ մասում ամրագրված իրավական դիրքորոշումներին՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իր՝ վերը նշված որոշման եզրափակիչ մասում ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի վիճարկվող՝ հրապարակվելու պահից, դրույթը՝ «այնքանով, որքանով երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում դատական ակտի տրամադրումը բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձին...»:

Նույն որոշման եզրափակիչ մասում սահմանադրական դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ տվյալ գործով վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված 402-րդ հոդվածը, **որպես տվյալ գործով վիճարկվող դրույթի կիրառման ընթացքում անձի իրավունքների ապահովման երաշխիք,** ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող՝ *«այնքանով, որքանով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի «ուղարկվում է» եզրույթը երաշխավորում է այդ ժամկետում դատարանի ամբողջական ակտի տրամադրումը (հասանելիությունը) օրենքով նախատեսված սուբյեկտներին»:*

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1052 որոշմամբ ամրագրված իրավական դիրքորոշումների համատեքստում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար **ժամանակ** ապահովող երաշխիքներ: Ինչպես արդեն նշվեց, սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը **և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի /հասանելի դարձվի/ անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության՝ անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար»:**

Այսպիսով, սահմանադրական դատարանի վերը նշված որոշումների բովանդակությունից բխում է, որ ***ՀՀ դատական պրակտիկայում դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել այն պահից, երբ անձն օբյեկտիվորեն իրական հնարավորություն ունի ամբողջությամբ ծանոթանալու դատական ակտի բովանդակությանը (դատական ակտն իր տրամադրության տակ ունենալու, իրեն հասանելի լինելու պահից):***

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:[1]

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման

[1] Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ *«...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար ասպիճանի հստակությամբ, որը թույլ կտա քաղաքացուն դրա հետ համապատեղելու իր վարքագիծը»:* Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:[1]

* * *

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող քրեադատավարական նորմերի՝ բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 375. ԴԱՏԱՎՃՌԻ ՊԱՏՃԵՆԸ ՀԱՆՁՆԵԼԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾԻՆ ԿԱՄ ԱՐԴԱՐԱՑՎԱԾԻՆ

Դատավճիռը հրապարակվելուց ոչ ուշ, քան 5 օրում դրա պատճենը պետք է հանձնվի դատապարտվածին կամ արդարացվածին, նրա պաշտպանին և մեղադրողին: Տուժողին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին դատավճռի պատճենն այդ նույն ժամկետում հանձնվում է նրանց միջնորդությամբ:

Հոդված 379. ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ ԲԵՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

1. Վերաքննիչ բողոք բերվում են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը՝ հրապարակվելու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում.

[1] ՀՀ սահմանդրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

Ելնելով սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումներից ՝ գտնում ենք, որ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի, իր խախտված իրավունքի վերականգնման երաշխավորման և այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պետության պոզիտիվ պարտականությունը բավարար կատարված չէ իրավակիրառական պրակտիկայում վիճարկվող նորմերին տրված մեկնաբանության և դրանց սխալ կիրառման պատճառով:**

<u>ՀՀ դատական պրակտիկայում դատական ակտերի բողոքարկման ժամկետի սկիզբը պետք է հաշվել այն պահից, երբ անձն օբյեկտիվորեն իրական հնարավորություն ունի ամբողջությամբ ծանոթանալու դատական ակտի բովանդակությանը (դատական ակտն իր տրամադրության տակ ունենալու, իրեն հասանելի լինելու պահից):</u>

Բ) Անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող քրեաիրավական նորմի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 343. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը

2. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է դատավարությանը մասնակցող անձանց վիրավորելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

3. Դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքը, որը դրսևորվել է պաշտոնական լիազորությունների իրականացման առնչությամբ դատավորին վիրավորելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

3. Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ ***արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*** (ընդգծումը մերն է՝ Գ.Կ.):

ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հոդված 164. Դատավորի կարգավիճակը

1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը սահմանում է դատարանի և դատավորի **անկախության և անաչառության սկզբունքը,** որը բխում է նաև անձի արդար դատաքննության իրավունքից (ՀՀ Սահմ., հոդվ 63, 69): Միաժամանակ, Սահմանադրությամբ և օրենքներով պետությունը երաշխավորել է նաև այս սահմանադրական սկզբունքի կենսագործումը: Այդպիսի երաշխիքներից մեկն է հանդիսանում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի քրեականացումը վիճարկվող քրեաիրավական նորմի սահմանմամբ՝ որպես դատարանի անկախության և անաչառության, ինչպես նաև անձի դատական քննության իրավունքի երաշխավորման առավել արդյունավետ իրավական միջոց:

Նման քրեաիրավական կարգավորումը կոչված է կանխելու դատարանի անաչառության վրա ազդող անհարգալից վերաբերմունքի դրսևորումները, որպեսզի

արդարադատություն իրականացնելիս դատարանը չկաշկանդվի նման վերաբերմունքի պատճառով:

Ուստի, գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթները սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չեն:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածով և 379-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված կարգավորումներին դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունները ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց են.

- ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի բովանդակությունը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց չէ:

Համակարգող՝ Լյուդվիկ Դավթյան